338.1
9-68

17 FEB 2010

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

Գ Ր Ի

«ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՈՒՂԻՆ, ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ—
ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻԱԿ ՃԻՇՏ ՈՒՂԻՆ Է»։

(ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ)

..... *շրջանի* .....

գյուղխորհրդի .....

..... *գյուղի*

.....

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

338.1
Գ-68

ՍԱԽԵԼԳԱՄԻ
ԹՐԻԼԻՍԻ—1937

20.03.2013

ՀՍՍՀ-ԿԳ
Մ. Ա. Կոչարի
անվ. Մանկատնային
գրադարան
371
37

Խմբագիր՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Գրական խմբ.՝ Վ. ՍԻՄՈՆՅԱՆ
Տեխխմբագիր
Սրբագրիչ } Ս. ԴՈՎԼԱԹՅԱՆ
Թողարկիչ
Տրված է արտադրության—7/VII—37 թ.
Ստորագրված է տպագրելու—29/VII—37 թ.
8½ × 12. թղթ. ֆոր. 72 × 105. տիրաժ 3000
Գլավլիտ—19660. պատվեր—2287.

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. «Զարյա Վոստոկա» հրատարակչութ. տպարան. Ռուսթավելու պող. 36

4 68 ար

Հարվածային կոլխոզնիկների Համամիութենական Յերկրորդ Համագումարի ընդունած և ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ու Համկոմկուսի Կենտրոնական Կոմիտեյի կողմից 1935 թ. փետրվարի 17-ին հաստատված գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության հիման վրա մշակված _____ շրջանի _____ գյուղխորհրդի _____ գյուղի գյուղատնտեսական արտելի ներկա կանոնադրությունն ընդունված է արտելի անդամների ընդհանուր ժողովում _____

(որաթիվ, ամիս, տարի)

Ընդհանուր ժողովի նախագահ _____
(ստորագրություն)

Ընդհանուր ժողովի քարտուղար _____
(ստորագրություն)

Ցուցակագրված է գյուղատնտեսական արտելի կանոնադրությունների ցուցակագրման շրջանային գրքում № _____-ի տակ
_____-ին
(որաթիվ, ամիս, տարի)

Շրջգործկոմի նախագահ _____
(ստորագրություն)

Շրջգործկոմի քարտուղար _____
(ստորագրություն)

Նկիքի տեղը

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
(արտելի անունը)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ

I.

ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. . . . . շրջանի . . . . . գյուղի աշխատավոր գյուղացիները կամավոր կերպով միանում, կազմում են գյուղատնտեսական արտել, վորպեսզի արտադրության ընդհանուր միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն հասարակական տնտեսություն, ապահովեն լիակատար հաղթանակ կուլակի դեմ, աշխատավորների բոլոր թշնամիների ու շահագոր-

ծողների դեմ, ապահովեն լիակատար հաղթանակ կարիքի, խավարի դեմ, մանր անհատական տնտեսության յուտմնացության դեմ, ստեղծեն աշխատանքի բարձր արտադրողականություն և այդպիսով ապահովեն կոլխոզնիկների լավագույն կյանքը։

Կոլխոզային ուղին, սոցիալիզմի ուղին — միակ ճիշտ ուղին է աշխատավոր գյուղացիների համար։ Արտելի անդամները պարտավորվում են ամրապնդել իրենց արտելը, աշխատել ազնվորեն, բաժանել կոլխոզային յեկամուտները ըստ աշխատանքի, պահպանել հասարակական սեփականությունը, պահպանել կոլխոզային բարիքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, սահմանել ձիու, բանող անասունների (ձիու, յեզան, գոմեշի) լավ խնամք, կատարել իրենց բանվորա-գյուղացիական պետության առաջադրությունները, և այդպիսով դարձնել իրենց կոլխոզը բոլշևիկյան և բոլոր կոլխոզնիկներին՝ ունևոր։

II.

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

2. Բոլոր սահմանները, վորոնք առաջ բաժանում եյին արտելի անդամների հողաբաժինները, վոչնչացվում են և բոլոր դաշտային հողաբաժինները դառնում են միասնական հողային զանգված, վորը գրանվում է արտելի կոլեկտիվ ոգտագործման մեջ։

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և ամեն մի ուրիշ հող Խորհրդային Միության մեջ)—համաժողովրդական պետական սեփականություն է։ Հողը, համաձայն բանվորա-գյուղացիական պետության որենքների, ամրացվում է արտելին անժամկետ ոգտագործման համար, այսինքն հավիտենապես և յենթակա չե վոչ գնման ու վաճառման, վոչ ել արտելի կողմից վարձով տալու։

Խորհուրդների շրջանային գործկոմը ամեն մի արտելի տալիս է պետական ակտ՝ հողի անժամկետ ոգտագործման համար. այդ ակտի մեջ սահմանվում են ոգտագործման համար արտելին տրամադրված հողի չափերն ու ճիշտ սահմանները, ըստ վորում՝ թույլ չի տրվում կրճատել այդ հողերը, այլ թույլատրվում է միայն ավելացնել այն, կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշվին, կամ մենատնտեսների զբաղեցրած ավելորդ հողերի հաշվին, պայմանով, վոր հողի վոչ մի սահմանահատում թույլ չտրվի։

Համայնացված հողահանդակներից առանձնացվում է ամեն մի կոլխոզային ծխի անձնական ոգտագործման համար փոքր տեղամաս՝ վորպես տնամերձ հող (բանջարանոց, այգի)։

Համապատասխան Վրաստանի Ժողկոմխորհի և Կ(բ)Կ Կենտկոմի «Գյուղատնտեսական արտելի կանոնադրությունները Վրաստանի ԽՍՀ կոլխոզների կողմից մշակելու, քննարկելու և ընդունելու վերաբերյալ միջոցառումների մասին» վորոշման, վորն ըստացել է ԽՍՀՄ Հողժողկոմատի և Համ.Կ(բ)Կ Կենտկոմի Գյուղատնտեսական Բաժնի հավանությունը (տես 1935 թ. մայիսի 17-ի «Պրավդա» թերթը և 1935 թ. մայիսի 18-ի «Զարյա Վոստոկա» թերթը), համայնացված հողահանդակներից կոլխոզային ծխի անհատական ոգտագործման համար (չհաշված բնակելի կառուցումների համար հատկացվող հողը), բանջարանոցի և բազմամյա տընկումների, ինչպես որինակ՝ պտղատու այգու, ցիտրուսների, խաղողի այգու, կառուցումները ծածկելու համար նյութ տվող յեղեգնիների («սախլե»), տնամերձ անտառակի և չմշակելի կանաչ բակի («քոինդարի») համար առանձնացվող տարածությունը սահմանվում է . . . . . հեկտար։

(մատնանշել տարածության չափը)

3. Արտելի միասնական հողային զանգվածը վոչ մի դեպքում չպետք է պակասի։ Արգելվում է արտելի հողային տարածության հաշվին հող տալ արտելից դուրս յեկած անդամներին։ Արտելից դուրս յեկողները կարող են հող ստանալ միայն պետական հողային ֆոնդի ազատ հողերից։

Արտելի հողերը բաժանվում են դաշտերի՝ հաստատված ցանքափոխության համապատասխան։ Ցանքափոխության դաշտերում ամեն մի դաշտավարական բրիգադի կցվում է մշտական հողամաս—ցանքափոխության ամբողջ ժամանակվա համար։

Կոլխոզային ֆերմայի անասունի համար կերային մշակույթներ ցանելու համար անասնաբուծական ֆերմային ամրացվում է . . . . հեկտար տեղամաս։

(Լրացվում է խոշոր անասնաբուծական ֆերմա ունեցող կոլխոզում, յեթե անհրաժեշտ է կերային մշակույթի տեղամաս առանձնացնել ֆերմայի անասունի համար և կոլխոզն ունի բավականաչափ հողեր)։

III.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Համայնացվում են—ամբողջ լծկան անասունները, գյուղատնտեսական ինվենտարը (դութան, սերմանիչ, ցաքան, կալսիչ, հնձիչ), սերմերի պաշարները, կերային միջոցները՝ համայնացված անասուններին պահելու համար անհրաժեշտ չափերով, արտելային տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ տնտեսական շենքերը և գյուղատնտեսության մթերքներ վերամշակող բոլոր ձեռնարկությունները։

Զեն համայնացվում և մնում են կոլխոզային ծխի անձնական ոգտագործման մեջ—բնակելի կառուցումները, նրա անհատական անասուններն ու թռչունները, բոլոր տընտեսական շենքերը, վոր անհրաժեշտ են կոլխոզային ծխի անձնական ոգտագործման մեջ գտնվող անասուններին պահելու համար։

Գյուղատնտեսական ինվենտարը համայնացնելիս արտելի անդամների անձնական ոգտագործման համար թողնվում է մանր գյուղատնտեսական ինվենտարը, վոր հարկավոր է տնամերձ հողում աշխատանքներ կատարելու համար։

Համայնացված լծկան անասուններից արտելի վարչությունն, անհրաժեշտության դեպքում, լծկան անասունների (յեզների, գոմեշների, ձիերի) վորոշ քանակություն տրամադրում է արտելի անդամների անձնական կարիքներին վճարով սպասարկելու համար։

Արտելը կազմակերպում է . . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . ապրանքային ֆերմա։

(մատնանշել խառն, թե մասնագիտացված անասնաբուծական ֆերմա)։

5. Համապատասխան Վրաստանի Ժողկոմխորհի և Կ(բ)Կ Կենտկոմի «Գյուղատնտեսական արտելի կանոնադրությունները Վրաստանի կոլխոզների կողմից մշակելու, քննարկելու և ընդունելու վերաբերյալ միջոցառումների մասին» վորոշման, վորն ըստացել է ԽՍՀՄ Հողժողկոմատի և Համ. Կ(բ)Կ Կենտկոմի Գյուղատնտեսական Բաժնի հավանությունը (տես 1935 թ. մայիսի 17-ի «Պրավդա» թերթը և 1935 թ. մայիսի 18-ի «Զարյա Վոստոկա» թերթը), սահմանվում է, վոր յուրաքանչյուր կոլխոզային ծուխ անհատական ոգտագործման համար կարող է ունենալ անասունների հետևյալ քանակը. կով կամ մատակ (եգ գոմեշ) . . . . . գլուխ, մատղաշ յեղջյուրավոր անասուն . . . . . գլ. մերուն խոզ՝ խոճկորներով, վոչխարներ և այծեր . . . . . գլ., փեթակներ մինչև 20 հատ և անսահմանափակ քանակությամբ թռչուններ ու ճագարներ և լրացուցիչ կերպով . . . . . ձի, ... ավանակ կամ . . . . ջորի։

IV

ԱՐՏԵԼԻ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում է վարել իր կոլեկտիվ տնտեսությունը պլանով, ճշտորեն կատարելով բանվորա-գյուղացիական կառավարության մարմինների սահմանած գյուղատնտեսական արտադրության պլանները և պետության հանձնել արտելի ունեցած պարտավորությունները։

Արտելը ճշտությամբ կատարում է ցանքի, ցել անելու, հողը շարքամեջ մշակելու, բերքահավաքի, կալսի և աշնանահերկի պլանները, որ կազմվում են հաշվի առած կոլխոզների վիճակն ու առանձահատկությունները, ինչպես և անասնաբուծության զարգացման պետական պլանը։

Արտելի վարչությունն ու բոլոր անդամները պարտավորվում են.

ա) բարձրացնել կոլխոզային դաշտերի բերքատվությունը, մոցնելով և ճշտորեն կատարելով ցանքափոխություն, կատարելով խոր հերկ, վոչնչացնելով մոլախոտերը, մաքրելով դաշտերը յեգիպտացորենի ծղոտներից, ընդլայնելով և լավ մշակելով ցելն ու աշնանահերկը, ժամանակին ու խնամքով կատարելով տեխնիկական մշակույթների շարքամեջ մշակումը, ժամանակին բուկ տալով բամբակը, մոցնելով հողի մեջ գոմաղը, ինչպես անասնաբուծական ապրանքային ֆերմաներից, այնպես էլ կոլխոզային ծխերից, մոցնելով հանքային պարարտանյութեր, գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելով, ժամանակին ու խնամքով կատարելով բերքահավաքը առանց կորուստների, պահպանելով ու մաքրելով վոռոգող կառուցումները, պահպանելով անտառները, տնկելով դաշտապաշտպան անտառաշերտեր, խստագույն կերպով պահպանելով տեղական հողային մարմինների սահմանած ագրոտեխնիկական կանոնները։

բ) ընտրել ցանքի համար ամենալավ սերմերը, զտել այդ սերմերն ամեն աղբից, հոգատար կերպով պահպանել հափշտակումից ու փչանալուց, պահել մաքուր ոգտվոխվող շենքերում, ընդլայնել տեսակավոր ցանքերը։

գ) ընդլայնել ցանքային տարածությունը, ոգտագործելով արտելի տրամադրության տակ գտնված ամբողջ հողը, բարելավելով ու մշակելով դեն նետած հողերը, հերկելով խոպան հողերը և կատարելով կոլխոզի ներսում հողաշինարարություն։

դ) հասարակական հիմունքներով լիովին ոգտագործել յեղած բոլոր լծկան ուժը, ամբողջ ինվենտարը, գյուղատնտեսական գործիքները, սերմերը և արտելին պատկանող արտադրության մյուս միջոցները, ինչպես և բոլոր տրակտորները, շարժիչները, կալսիչները, կոմբայնները և մյուս մեքենաները, որ տրամադրում է բանվորա-գյուղացիական պետությունը ՄՏԿայանների միջոցով կոլխոզներին ոգնելու համար. կանոնավոր կազմակերպել համայնացրած կենդանի ու մեռյալ ինվենտարի խնամքը, ձգտելով, որպեսզի կոլեկտիվ տնտեսության մեջ անասուններն ու ինվենտարը լինեն լավ վիճակում։

յե) կազմակերպել անասնաբուծական ֆերմաներ, իսկ այնտեղ, ուր հնարավորություն կա, նաև ձիաբուծական ֆերմաներ, ավելացնել անասունների քանակը, բարելավել նրանց տեսակներն ու մթերատվությունը ֆերմաներում, արտելի արտադրության մեջ ազնիվ աշխատող անդամներին ցույց տալ ոգնություն՝ կով և մանր անասուններ ձեռք բերելու մեջ, սպասարկել ցեղային և բարելավված արտադրողներով վոչ միայն ֆերմայի անասուններին, այլ և արտելի անդամների անձնական ոգտագործման մեջ գտնվող անասուններին, պահպանել սահմանված զոոտեխնիկական ու անասնաբուծական կանոնները։

զ) ընդլայնել կերի արտադրությունը, բարելավել մարգագետիններն ու արոտատեղիները, ոգնություն ցույց տալ արտելի այն անդամներին, վորոնք բարեխղճորեն աշխատում են հասարակական արտադրության մեջ, ապահովելով, որ այդ հնարավոր է, վոր նրանք ոգտվեն կոլխոզային արոտատեղիներից, ինչպես և տալ անասունների կեր աշխորերի հաշվին՝ նրանց անձնական ոգտագործման մեջ գտնվող անասունների համար։

է) զարգացնել գյուղատնտեսական արտադրության մնացած ճյուղերը՝ նկատի ունենալով տեղի բնական պայմանները—հիմնարկել թեյի պլանտացիաներ, ցիտրուսային և պտղատու այգիներ, խաղողի այգիներ, ազնիվ դափնու, ռամիի, տուտգի տընկումներ և այլ բազմամյա տնկումներ և տընկարաններ, ապահովելով թեյի պլանտացիաների, ցիտրուսային և պտղատու այգիների և մյուս բազմամյա տնկումների, ինչպես նաև ծխախոտի, բախչաների, բանջարանոցների, կարտոֆիլի շարքամիջյան մշակումը ժամանակին ու խնամքով. ժամանակին կատարել թեյի, ցիտրուսների և այլն բուժումը, աճեցնել ու ընտրել բազմամյա մշակույթների լավագույն տունկերը՝ հիմնարկման համար . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . (պակասը՝ գրել) . . . . . .

. . . . . .

. . . . . .

Զարգացնել տնայնագործական արդյունաբերությունը, ինչպես որինակ՝ . . . .

. . . . . .

. . . . . .

Խնամել ու մաքրել յեղած լճակները, կառուցել նորերը և ստեղծել նրանցում ձկնարդյունաբերական տնտեսություն։

ը) հասարակական հիմունքներով կազմակերպել տնտեսական շենքերի շինարարությունը.

թ) բարձրացնել արտելի անդամների աշխատանքային վորակավորումը, աջակցել կոլխոզնիկներին նրանցից բրիգադիրներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ, շոֆերներ, անասնաբուժական ֆելդշերներ ու սանիտարներ, ձիապաններ, խոզապաններ, անասնապահներ, չոբաններ, հովիվներ, պատվաստողներ, բուկ տվողներ, ջրողներ և մելիորատորներ, խրճիթ-լաբորատորիաների աշխատողներ պատրաստելու գործում։

ժ) բարձրացնել արտելի անդամների կուլտուրական մակարդակը, տարածել թերթեր, գրքեր, ռադիո, կինո, ստեղծել ակումբներ, գրադարաններ ու ընթերցարաններ, բանալ բաղանիքներ, վարսավիրանոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր տաղավարներ դաշտերում, կարգի բերել գյուղական փողոցները, տնկել փողոցներում զանազան, առանձնապես պտղատու ծառեր, թթի, եվկալիպտի, տուտգի, դափնու, ընկույզի և այլ պտղատու ծառեր և դեկորատիվ բույսեր, ոժանդակել կոլխոզնիկներին իրենց բնակարանները բարելավելու և զարդարելու, ինչպես և տնամերձ հողերում բազմամյա արժեքավոր մշակույթներ, ինչպես, որինակ՝ ցիտրուսային, տուտգի, եվկալիպտների, պտղատու, թթի և ընկույզի ծառեր տնկելու մեջ։

ի) ներգրավել կանանց կոլխոզային արտադրության և արտելի հասարակական կյանքի մեջ, առաջ քաշելով ընդունակ ու փորձված կոլխոզնիկուհիներին ղեկավար աշխատանքի, բեռնաթափ անելով նրանց, ըստ հնարավորության, տնային աշխատանքներից՝ մանկամուրներ, մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջոցով։

V.

ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7. Արտելի անդամներին ընդունում է արտելի անդամների ընդհանուր ժողովը, վորը հաստատում է վարչության ներկայացրած նոր անդամների ցուցակները։

Արտելի անդամ կարող են դառնալ 19 տարեկան հասակ ունեցող բոլոր աշխատավորները, ինչպես կանայք, նույնպես և տղամարդիկ։

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրավունքներից զրկված բոլոր անձինք։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այդ կանոնից բացառություններ թույլ են տրվում.

ա) ձայնազուրկների այն զավակների նկատմամբ, վորոնք մի շարք տարիներ զբաղվում են հասարակական ոգտակար աշխատանքով և բարեխղճորեն աշխատում են.

բ) այն նախկին կուլակների և նրանց ընտանիքների անդամների նկատմամբ, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային ու հակակոլխոզային յելույթների համար, նոր բնակատեղերում 3 տարվա ընթացքում փրենց ազնիվ աշխատանքով և խորհրդային իշխանության միջոցառումներին աջակցելով ցույց են տվել, վոր նրանք ուղղվել են։

Այն մենատնտես գյուղացիները, վորոնք վաճառել են իրենց լծկան անասունը (ձիեր, յեզներ, գոմեշներ) վերջին 2 տարվա ընթացքում, նախքան արտել մտնելը և չունեն սերմացու, ընդունվում են արտելի մեջ պայմանով, վոր նրանք պարտադիր կերպով իրենց յեկամուտներից 6 տարվա ընթացքում մաս-մաս վճարեն լծկան անասունի (ձիերի, յեզների և գոմեշների) արժեքը և սերմերը՝ ընամթերքով։

8. Արտելից կարելի յե արտաքսել միայն արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վորտեղ ներկա յե արտելի անդամների ընդհանուր թվի վոչ պակաս քան $^2/_3$-ը։

Արտելի անդամների ընդհանուր ժողովի արձանագրության մեջ անպայման մատնանշվում է ժողովում ներկա գտնված կոլխոզնիկների թիվը և արտաքսելու ոգտին ձայն տվողների քանակը։ Այն դեպքում, յերբ արտելի անդամը բողոքարկում է իրեն արտաքսելու վերաբերյալ վորոշումը խորհրդի շրջանային գործկոմում, ապա հարցը վերջնականապես լուծում է խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեյի նախագահությունը՝ արտելի վարչության նախագահի և գանգատվողի ներկայությամբ։

VI.

ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. Արտել մտնողները պետք է վճարեն դրամական մուտքավճար 20—40 ռուբլու չափով՝ ամեն մի ծխից, նայած նրանց տընտեսությունների ուժին։ Մուտքավճարները մուծվում են արտելի անբաժանելի ֆոնդի մեջ։

10. արտելի անդամների համայնացված գույքի արժեքի (լծկան անասուններ, ինվենտար, տնտեսական շենքեր և այլն) մեկ քառորդից մինչև կեսը մուծվում է արտելի անբաժանելի ֆոնդի մեջ, ըստ վորում՝ անբաժանելի դրամագլխի համար մուծումների մեծ տոկոսի հատկացում գործադրվում է ավելի ուժեղ տնտեսությունների վերաբերմամբ։ Գույքի մնացած մասը մուծվում է արտելի անդամի փայամուծման մեջ։

Արտելի կազմից դուրս յեկող անդամների հետ վարչությունը հաշիվ է տեսնում և վերադարձնում է նրան փայամուծումը դրամով, ըստ վորում՝ արտելից դուրս յեկողին կարելի յե հող տալ միայն արտելի հողային տարածության սահմաններից դուրս գտնվող հողերի հաշվին։ Իբրև կանոն՝ հաշիվը տեսնվում է տնտեսական տարին վերջանալուց հետո։

11. Անասնաբուծության մթերքներից և բերքից արտելը՝

ա) կատարում է իր պարտավորությունները պետության հանդեպ՝ մթերքներ հանձնելու և փոխ առած սերմերը վերադարձնելու գծով, ընամթերքով վճարում է ՄՏԿ-յանին նրա աշխատանքի համար՝ կնքած պայմանագրի համապատասխան, վորն ունի որենքի ուժ, և կատարում է կոնտրակտացման գծով կնքած պայմանագիրը։

բ) հավաքում և սերմեր ցանքի համար և ֆուրաժ՝ ամբողջ տարվա ընթացքում, անասուններին կերակրելու համար, ինչպես և անբերրիության ու անասունների կերի բացակայության դեպքերում ապահովելու համար, ստեղծում է անձեռնմխելի՝ ամեն տարի վերականգնվող սերմային ու կերային ֆոնդեր—տարվա պահանջի 10—15 տոկոսի չափով.

գ) ընդհանուր ժողովի վորոշմամբ ստեղծում է ֆոնդեր՝ հաշմանդամներին, ծերունիներին, ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածներին և կարմիր-բանակայիններին կարիքավոր ընտանիքներին ոգնելու, մանկամսուրների և վորբերի պահպանման համար—այդ ամենն ընդհանուր արտադրանքի վոչ ավելի քան 2 տոկոսի չափով.

դ) առանձնացնում է՝ արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշած չափերով՝ մթերքների մի մասը—պետությանը կամ շուկայում վաճառելու համար.

յ) բերքի և անասնաբուծության մթերքների մնացած ամբողջ զանգվածն արտելը բաժանում է արտելի անդամների միջև՝ աշխորների համաձայն։

12. Արտելի ստացած դրամական յեկամուտներից արտելը՝

ա) վճարում է պետությանը որենքով սահմանված հարկերը և վճարում է ապահովագրական վճարումները.

բ) կատարում է անհրաժեշտ ծախքեր ընթացիկ արտադրական կարիքների համար, ինչպես որինակ՝ գյուղատնտեսական գործիքների ընթացիկ նորոգություն, անասունների բուժում, պայքար ֆաստաունների դեմ և այլն.

գ) ծածկում է արտելի վարչական-տնտեսական ծախքերը, առանձնացնելով դրա համար դրամական յեկամուտների 2 տոկոսից վոչ ավելին.

դ) առանձնացնում է միջոցներ կուլտուրական կարիքների համար, ինչպես, որինակ՝ բրիգադիրների և ուրիշ կադրերի պատրաստություն, մանկամսուրների, ռադիոյի կազմակերպում և այլն.

յ) լրացնում է արտելի անբաժանելի ֆոնդը՝ գյուղատնտեսական գործիքներ ու անասուններ գնելու, շինությունների արժեքը վճարելու և դրսից շինարարությանը ներգրավվող բանվորների աշխատավարձը տալու, յերկարատև վարկերի գծով գյուղատնտեսական բանկի հերթական մուծումները կատարելու համար, ըստ վորում՝ անբաժանելի ֆոնդերը լրացնելու համար հատկացումները կատարվում են արտելի դրամական յեկամուտների 10—20, բայց վոչ ավելի տոկոսի չափով.

զ) դրամական յեկամուտների մնացած ամբողջ գումարն արտելը բաժանում է արտելի անդամների միջև՝ աշխորների համաձայն։

Բոլոր յեկամտային մուտքերը անպայման գրանցվում են արտելի մատյանի մեջ՝ նրանց ստացվելու որից վոչ ուշ։

Ինչպես յեկամտային մուտքերի, այնպես և միջոցները ծախսելու վերաբերմամբ արտելի վարչությունը կազմում է տարվա նախահաշիվ, վորն իր ուժի մեջ է մտնում միայն արտելի անդամների ընդհանուր ժողովի հաստատությունից հետո։

Միջոցները վարչությունը կարող է ծախսել միայն նախահաշվով նախատեսված հոդվածներով. վարչությունն իրավունք չունի ինքնակամ կերպով միջոցները ծախքերի նախահաշվի մի հոդվածից մյուսը փոխադրել և միջոցները հոդվածից-հոդված փոխադրելու համար վարչությունը պարտավոր է ստանալ ընդհանուր ժողովի թույլտվությունը։

Իր ազատ միջոցներն արտելը պահում է իր ընթացիկ հաշվի մեջ բանկում կամ խնայողական դրամարկղում։ Ընթացիկ հաշվից գումար դուրս գրելը տեղի յե ունենում միայն արտելի վարչության պահանջագրով, վորը վավեր է արտելի նախագահի և հաշվետարի ստորագրությունների առկայությամբ։

VII.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

13. Արտելի տնտեսության մեջ բոլոր աշխատանքները կատարվում են նրա անդամների անձնական աշխատանքով, համաձայն ընդհանուր ժողովի կողմից ընդունված ներքին կարգ ու կանոնի։ Թույլատրվում է գյուղատնտեսական աշխատանքների համար վարձով աշխատանքի կանչել միայն մասնագիտական գիտելիքներ ու պատրաստություն ունեցող անձանց (ագրոնոմներ, ինժեներներ, տեխնիկներ և այլն)։

Ժամանակավոր բանվորներ վարձել թույլ է տրվում միայն բացառիկ դեպքերում, երբ շտապ աշխատանքները չի կարելի կատարել պահանջվող ժամկետին արտելի անդամների ուժերով՝ նրանց լիակատար բեռնվածության պայմաններում, ինչպես և շինարարական աշխատանքների համար։

14. Արտելի անդամներից վարչությունն ստեղծում է արտադրական բրիգադներ։

Դաշտավարական բրիգադներ կազմվում են վոչ պակաս, քան լիակատար ցանքափոխության ժամանակամիջոցի համար։

Դաշտավարական բրիգադին տրամադրվում է հողամաս ցանքափոխության դաշտերում՝ ցանքափոխության ժամանակամիջոցի համար։

Ամեն մի դաշտավարական բրիգադի՝ կոլխոզի վարչությունը, հատուկ արձանագրությամբ, կցում է անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, լծկան անասուններ և տնտեսական շենքեր։

Անասնաբուծական բրիգադներ կազմվում են վոչ պակաս, քան 3 տարի ժամկետով։

Ամեն մի անասնաբուծական բրիգադի արտելի վարչությունը կցում է մթերատու անասուններ, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտար ու լծկաններ և անասնաբուծական շենքեր։

Արտելի անդամների միջև աշխատանքը բաժանում է անմիջականորեն բրիգադիրը, վորը պարտավոր է լավագույն կերպով ոգտագործել իր բրիգադի ամեն մի կոլխոզնիկի, թույլ չտալով աշխատանքը բաժանելու ժամանակ վորևե խնամիություն ու ընտանեկանություն և խստորեն հաշվի առնելով ամեն մեկի աշխատանքային վորակավորումը, փորձառությունը, ֆիզիկական ուժը, իսկ հղի և կերակրող կանանց վերաբերմամբ անհրաժեշտ է թեթևացնել նրանց աշխատանքը, կանանց ազատելով աշխատանքներից ծննդաբերությունից մի ամիս առաջ և մի ամսով ծննդաբերությունից հետո, այդ 2 ամսվա համար պահպանելով նրանց հասանելիք աշխատավճարը, նրանց աշխորերի միջին վաստակի կեսի չափով։

15. Արտելում գյուղատնտեսական աշխատանքներն իրականացվում են գործավարձի հիմունքներով։

Արտելի վարչության կողմից մշակվում և կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից հաստատվում է գյուղատնտեսական աշխատանքների ամեն մի աշխատանքի արտադրման նորմաները ու գնահատումներն՝ աշխորերով։

Ամեն մի աշխատանքի համար սահմանվում են բարեխիղճ աշխատող կոլխոզնիկին մատչելի արտադրության նորմաներ, հաշվի առնելով լծկան անասունների, մեքենաների ու հողի վիճակը։ Ամեն մի աշխատանք, որինակ՝ հերկել մի հեկտար, ցանել մի հեկտար, բուկ տալ բամբակի մի հեկտար, կալսել մի տոնն հացահատիկ, հանել մի ցենտներ ճակնդեղ, հավաքել մի կիլոգրամ կանաչ թեյի տերև, կոտրել մի շարուկ ծխախոտ, գզել մի հեկտար վուշ, թրջել մի հեկտար վուշ, կթել մի լիտր կաթ և այլն, գնահատվում է աշխորերով, նայած աշխատողից պահանջվող, վորակավորման, աշխատանքի բարդությանը, դժվարությանն ու արտելի համար ունեցած կարևորությանը։

Շաբաթը վոչ պակաս, քան մի անդամ բրիգադիրը հաշվի յե յենթարկում կոլխոզնիկի կատարած ամբողջ աշխատանքը և, սահմանված գնահատումների համապատասխան, գրում է կոլխոզնիկի աշխատանքային գրքույկում նրա ունեցած աշխորերի քանակությունը։

Արտելի վարչությունն ամեն ամիս փակցնում է պատին արտելի անդամների ցուցակը, մատնանշելով անցած ամսում նրանց ձեռք բերած աշխորերի քանակը։

Ամեն մի կոլխոզնիկի յեկամուտը և տարեկան աշխատանքի հանրագումարը, բացի հաշվետարից, անպայման հաստատում են արտելի բրիգադիրը և նախագահը։

Արտելի ամեն մի անդամի աշխորերի ցուցակը փակցվում է պատին՝ ի գիտություն բոլորի վոչ ուշ, քան 2 շաբաթ առաջ այն ընդհանուր ժողովից, վորը հաստատում է արտելի յեկամուտների բաշխումը։

Ցեթե դաշտավարական բրիգադը լավ աշխատանքի շնորհիվ, իրեն կցված հողամասերից հավաքում է կոլխոզային միջակ բերքից ավելի բարձր բերք, կամ՝ յեթե անասնաբուծական բրիգադը ավելի լավ աշխատանքի հետևանքով ապահովում է կովերի ավելի բարձր կաթնատվությունը, անասունների ավելի մսատվությունը, մատղաշի լիակատար պահպանումը, ապա այդ տեսակ բրիգադի բոլոր անդամների յեկամուտների վրա արտելի վարչությունն ավելացնում է նրանց աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսը, բրիգադի աչքի ընկած հարվածայինների վերաբերմամբ—մինչև 15 տոկոս, իսկ ֆերմայի բրիգադիրի և վարիչի վերաբերմամբ—մինչև 20 տոկոս։

Ցեթե դաշտավարական բրիգադը վատ աշխատանքի հետևանքով իրեն կցված հողամասերից հավաքում է միջին կոլխոզային բերքից ավելի ցածր բերք կամ անասնաբուծական բրիգադը վատ աշխատանքի հետևանքով տալիս է միջակից ցածր կաթնատվություն, անասունների մսատվություն և մատղաշի պահպանում, ապա արտելի վարչությունն այդ տեսակ բրիգադի բոլոր անդամների յեկամուտից հանում է նրանց աշխորերի ընդհանուր թվի մոտ 10 տոկոսը։

Արտելի յեկամուտներն անդամների միջև բաշխվում են բացառապես արտելի ամեն մի անդամի ձեռք բերած աշխորերի քանակության համապատասխան։

16. Դրամական կանխավճար կարելի յե տալ արտելի անդամին տարվա ընթացքում նրա կատարած աշխատանքի համար հասանելիք գումարի 50 տոկոսից վոչ ավելի։

Բնամթերային կանխավճարներ վարչությունը տալիս է արտելի անդամներին հացը կալսելու սկզբից՝ ներկոլխոզային կարիքներին հատկացված կալված հացի 10—15 տոկոսը։

Տեխնիկական մշակույթների ցանքով զբաղվող արտելի մեջ՝ արտելի անդամին դրամական յեկամուտ է տրվում՝ առանց սպասելու պետությանը բամբակ, վուշ, կանեփ, ճակնդեղ, թեյ, ծխախոտ և այլն հանձնելու ավարտմանը, այլ հանձնման համաձայն շաբաթը վոչ պակաս, քան մի անդամ հանձնված արտադրանքի դիմաց արտելի ստացած դրամների 60 տոկոսի չափով։

17. Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խստորեն պահպանել իրենց կոլխոզային սեփականությունը, կոլխոզային դաշտերում աշխատող պետական մեքենաները, աշխատել ազնվորեն, յենթարկվել կանոնադրության պահանջներին, ընդհանուր ժողովի և վարչության վորոշումներին, պահպանել ներքին կարգ ու կանոնները, ճշտապահորեն կատարել այն աշխատանքներն ու հասարակական պարտավորությունները, վոր դնում են նրանց վրա վարչությունը և բրիգադիրը, խստորեն պահպանել աշխատանքային կարգապահությունը։

Անտնտեսավարության, դեղի հասարակական գույքն անփույթ վերաբերմունք ցույց տալու, առանց հարգելի պատճառների աշխատանքի չգնալու, ցածրորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահության ու կանոնադրության ուրիշ խախտումների համար վարչությունը հանցավորներին յենթարկում է տուժանքների,

համաձայն ներքին կարգ ու կանոնների, որինակ՝ նորից կատարել վատորակ աշխատանքը՝ առանց ավելացնելու աշխորների վրա, նախազգուշացում, հանդիմանություն, պարսավանք ընդհանուր ժողովում, գրել սև տախտակին, տուգանք 5 աշխորի չափով, նշանակել ավելի ստորին աշխատանքի, ժամանակավորապես հեռացնել աշխատանքից։

Այն դեպքերում, յերբ արտելի ձեռք առած դաստիարակության ու պատժի բոլոր միջոցները չեն ազդում, արտելի անուղղելի անդամների վերաբերմամբ հարց է դրվում ընդհանուր ժողովի առաջ՝ արտելից նրանց արտաքսելու մասին։

Արտաքսումը կատարվում է ներկա կանոնադրության 8-րդ կետով սահմանված կարգով։

18. Հասարակական, կոլխոզային, պետական սեփականության ամեն մի հափշտակում, դեպի արտելի գույքն ու անասունները և ՄՏԿայանների մեքենաները ցույց տրվող ջնասարար վերաբերմունքն արտելը համարում է իբրև դավաճանություն կոլխոզի ընդհանուր գործին և ոգնություն ժողովրդի թշնամիներին։

Կոլխոզային իրավակարգի հիմունքները այդպես ջլատող հանցավոր անձանց արտելը հանձնում է դատի՝ բանվորագյուղացիական պետության որենքների ամբողջ խստությամբ պատժելու համար։

VIII.

ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Արտելի գործերը վարում է արտելի անդամների ժողովը, իսկ ժողովների միջանկյալ շրջաններում—ընդհանուր ժողովի ընտրած վարչությունը։

20. Ընդհանուր ժողովը հանդիսանում է արտելի կառավարման բարձրագույն որգանը։

Ընդհանուր ժողովը—

ա) ընտրում է արտելի նախագահ և արտելի վարչություն, ինչպես և արտելի վերաստուգիչ հանձնաժողով, ըստ վորում վերաստուգիչ հանձնաժողովը հաստատվում է խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեի կողմից.

բ) կատարում է նոր անդամների ընդունելություն և հեռացումներ արտելի կազմից.

գ) հաստատում է տարեկան արտադրական պլանը, յելմտից նախահաշիվը, շինարարության պլանը, արտադրման նորմաներ և աշխատանքների գնահատումն աշխորերով.

դ) հաստատում է ՄՏԿայանի հետ կնքված պայմանագիրը.

յե) հաստատում է վարչության — պարտադիր կերպով վերաստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունը կրող — տարեկան հաշվետվությունը, ինչպես և վարչության հաշվետվությունները գյուղատնտեսական կարևորագույն կամպանիաների մասին.

զ) հաստատում է զանազան ֆոնդերի չափերը և աշխորերի համար արվելիք մրթերքների ու դրամների քանակը.

է) հաստատում է արտելի ներքին կարգ ու կանոնը։

Կանոնադրության այս կետում թված բոլոր խնդիրների վերաբերմամբ արտելի վարչության հանած վորոշումներն անվավեր են առանց ընդհանուր ժողովի հաստատման։

Ընդհանուր ժողովը համարվում է իրավազոր անդամների ընդհանուր թվի վոչ պակաս, քան կեսի ներկա լինելու դեպքում՝ բոլոր հարցերին լուծում տալու համար, բացի արտելի վարչության և արտելի նախագահի ընտրության հարցից, արտելի կազմից հեռացնելու հարցից և զանազան ֆոնդերի վերաբերյալ հարցից, վորոնց լուծելու համար պահանջվում է անդամների վոչ պակաս, քան յերկու յերրորդի ներկայությունը ընդհանուր ժողովում։

Ընդհանուր ժողովի վորոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ և բաց քվեարկությամբ։

21. Արտելի գործերը վարելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովն ընտրում է 2 տարի ժամանակով վարչություն, բաղկացած . . . . . հոգուց*)։

Արտելի վարչությունը հանդիսանում է արտելի գործադիր մարմին և պատասխանատու յե արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ արտելի աշխատանքի և պետության հանդեպ արտելի պարտավորությունները կատարելու համար։

22. Արտելի և նրա բրիգադների աշխատանքն ամեն որ ղեկավարելու համար, ինչպես և վարչության վորոշումների կատարումն ամեն որ ստուգելու համար—արտելի ընդհանուր ժողովն ընտրում է արտելի նախագահ, վոր միաժամանակ հանդիսանում է վարչության նախագահ։

Նախագահը պարտավորվում է հրավիրել վարչության նիստ ամիսը վոչ պակաս, քան 2 անգամ՝ ընթացիկ գործերը քննելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար։

Նախագահին ոգնելու համար՝ վարչությունն ընտրում է նախագահի տեղակալ վարչության անդամների թվից, նախագահի առաջադրությամբ։

Նախագահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ յենթարկվում է նախագահի ցուցմունքներին։

23. Բրիգադիրները և անասնաբուծական ֆերմաների վարիչները նշանակվում են արտելի վարչության կողմից վոչ պակաս, քան յերկու տարի ժամկետով։

24. Հաշվետվությունը և գույքի հաշվառքը կատարելու համար՝ վարչությունը նշանակում է արտելի անդամներից կամ հրավիրում է վարձու հաշվետար։ Հաշվետարը տանում է հաշիվները ու հաշվառքը սահմանված ձևերով և ամբողջովին յենթարկվում է արտելի վարչությանն ու նրա նախագահին։

Հաշվետարին վոչ մի իրավունք չի տրվում ինքնագլուխ կերպով գործադրել արտելի միջոցները, կանխավճարներ տալ և ծախսել նատուրալ ֆոնդերը։ Այդ իրավունքները տրամադրվում են միայն վարչությանը և արտելի նախագահին։ Արտելի բոլոր ծախսերի դրամական փաստաթղթերը, բացի հաշվետարից, ստորագրում է արտելի նախագահը կամ նրա տեղակալը։

25. Վերաստուգիչ հանձնաժողովն ստուգում է վարչության ամբողջ տնտեսական - ֆինանսական գործունեությունը, ստուգում է թե բոլոր դրամական և թե մթերային ստացումները սահմանված կարգով անց են կացված, արդյոք, արտելի մուտքի մեջ, պահպանվում է, արդյոք, կանոնադրությամբ նախատեսված միջոցների ծախսման կարգը, բավականաչափ հոգատարությամբ է պահվում, արդյոք, արտելի ունեցվածքը, տեղի չունի, արդյոք, արտելի դրամական միջոցների և ունեցվածքի վատնում և հափշտակում, ինչպես է հաշիվները մաքրում արտելը պետության հանդեպ իր ունեցած պարտավորությունների գծով, ինչպես է արտելը վճարում իր պարտքերը և ինչպես է գանձում իր ստանալիքները պարտապաններից։

Սրան զուգընթաց, վերաստուգիչ հանձնաժողովը մանրազնին ստուգում է արտելի՝ իր անդամների հետ ունեցած բոլոր հաշիվները, հայտնաբերում է պակաս հաշվելու, աշխորերը վոչ ճիշտ ավելացնելու, ըստ աշխորերի ժամանակին հաշիվ չտանելու յուրաքանչյուր դեպք և արտելի ու նրա անդամների շահերի խախտման այլ դեպքեր։

Վերաստուգիչ հանձնաժողովն ստուգում կատարում է տարեկան չորս անգամ։ Ընդհանուր ժողովի առջև վարչության

*) Թիվը մատնանշվում է 5—9 հոգի, նայած արտելի մեծությանը։

կողմից տարեկան հաշվետվությանը վերաստուգիչ հանձնաժողովը տալիս է իր յեզրակացությունը, վորը լսում է ընդհանուր ժողովը վարչության հաշվետվությունից անմիջապես հետո։ Վերաստուգման արձանագրությունը հաստատում է ընդհանուր ժողովը։

Իր գործունեության համար վերաստուգիչ հանձնաժողովը հաշիվ է տալիս արտաքին անդամների ընդհանուր ժողովին։

ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

40755

УСТАВ СЕЛЬХОЗАРТЕЛИ

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

САХЕЛГАМИ

«Ազգային գրադարան»
NL0204840

29.997